# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ մարտի 13 N 25 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԱԳԱԾԱՎԱՆԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐՏԵՆԻԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԳԵՏԱՓԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐԵՎՈՒՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>, << ՑԱՄԱՔԱՍԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԴԱՇՏԱԴԵՄԻ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԶԱՐԻՆՋԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՍՈՒՍԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ–728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները **Կարգադրում եմ՝**

1. 2018 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Արագածավանի թիվ 2 միջնակարգ դպրոց>>, <<Արտենիի թիվ 2 հիմնական դպրոց>>, <<Գետափի հիմնական դպրոց>>, <<Արևուտի հիմնական դպրոց>>, <<Ցամաքասարի միջնակարգ դպրոց>>, <<Դաշտադեմի Գ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Զարինջայի միջնակարգ դպրոց>>, <<Սուսերի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2015-2017թթ համակարգի գնահատման աուդիտ բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետներ Ենոք Մինասյանի, Արթուր Կարապետյանի, Գոռ Եգորյանի և Սիրան Ասատրյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 27 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի մարտի 14-ից ավարտել ապրիլի 18-ին:

**Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**